




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

4

ԲՐԻԳԱԴԱՅԻՆ - ԼԱԲՈՐԱՏՈՐ
ՄԵԹՈԴԸ, ԲՈՒՀԵՐՈՒՄ ՅԵՎ,
ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐՈՒՄ

-53-

ԲՐԻԳԱԴԱՅԻՆ-ԼԱԲՈՐԱՏՈՐ
ՄԵԹՈԴԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՅԵՎ
ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐՈՒՄ



ՀԱՄԱՆ-Ի ԿԱԴՐԵՐԻ ՄԵԿՏՈՐ

Պատճառի տպարան
Դրավիտ 6996 թ)
Հրատ. 1935
Պատվեր 6152
Ֆիրմ 5000

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈՆԱՐԵՆ

Սոցիալիստական արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը մեր պրոֆտեսինիկական կրթական ցանցից (ԲՈՒՀ-երից, ԲՏՈՒՀ-երից, տեխնիկումներէց), ակնկալում են վոչ միայն արագ թափ մասնագետների արտադրման գործում, այլև այդ մասնագետների վերակային ցուցանիշների բարձրացում, վորսլիսին հանդիսանում է ներկա շրջանի ամենահրատապ հարցերից մեկը:

Ընկ. Ստալինի՝ հունիսի 23-ի տնտեսավարների խորհրդակցությունում արտասանած ճառը պիտի հանդիսանա մարտական խնդիր վոչ միայն արդյունաբերության բնագավառի համար, ուլև պետք է ամբողջովին կիրառվի պրոֆտեսինիկական կրթական ցանցում, հատկապես կադրերի պատրաստման ուսումնա-մեթոդական բնագավառում, նոր պայմաններով, նոր ձևով զեկավարելու համար:

Սոցիալիստական շինարարության նեղ տեղերից մեկը հանդիսացող կադրերի պրորլեմը հաջողությամբ լուծելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ճշտել, կանոնավորել դասավանդման նոր ակտիվ մեթոդները, վերացնելով այդ բնագավառում դիմադրությունը, անպատասխանատվությունն ու թափթփվածությունը:

Հայաստանի պրոֆտեսինիկական կրթական ցանցի վերակառուցումից հետո համապատասխան զերատեսչություններին կից կազմակերպվեցին կադրերի սեկտորներ, իսկ Լուսժողկոմատի կադրերի սեկտորից զատ

1-337791

ստեղծվեց ուսումնա-մեթոդական սեկտոր, վորի վրա
յեն ընկնում վողջ կադրերի, առաջին հերթին պրոֆեսոր-
նիկական կրթական ցանցի ուսումնա-մեթոդական դե-
կավարման աշխատանքները: Բայց անցել է ուղիղ յերեք
տարի, մինչ այսօր դեռ Լուսժողովմատի գերատեսչու-
թյունների ու ինստիտուտների գերեկցիաների մեջ չկա
ֆունկցիաների ճիշտ սահմանագծում, իսկ Լուսժողով-
մատի համապատասխան սեկտորը միանգամայն ինքնա-
հրաժեշտ թողել այդ կարևորագույն աշխատանքներն
առ մեծ ճեղքվածք ստեղծել այդ բնագավառում: Տարբեր
կրթական ցանցի գերեկցիաները, նույնիսկ առանձին-
առանձին ամբիոնի ղեկավարներն ու պրոֆեսոր-դասա-
րանական կադմն ըստ իրենց հասկանալով նոր մեթոդ-
ների ստեղծումն ու կիրառումը, վոմանք իրենց աշխա-
տանքներով դրական փորձ են կատարել, իսկ վոմանք
էլ միանգամայն ազավաղել են ակտիվ մեթոդները:
Այսօր այդ պրոֆեսորայի մի զգալի մասն իրեն հռո-
տահելով այդ աշխատանքներից, սպասում է, վոր վե-
րեից թեկադրեն, կամ դիտավորյալ սարտածի յե յեն-
թարկում այդ կարևոր աշխատանքները:

Մի խոսքով՝ այդ բնագավառում այսօր մենք ունենք
գլխավորելության բոլոր ելմենտները, աշխատանքների
և ուժերի վոչ ճիշտ դասավորում: Այստեղից է, վոր
առաջացել է այն մեծ ճեղքվածքը, վոր այսօր մենք ու-
նենք պրոֆեսորնիկական ցանցի ակադեմ. արտադրական
կյանքում, հատկապես մեթոդների բնագավառում, —
սեմպերից հետ մնալը, կուսակցության ու իշխանու-
թյան կարևորագույն վորոշումները պրոֆեսորնիկական
կրթական ցանցի նկատմամբ չկիրառելը, սկզբունքային
գոկումենտներ չմշակելը, անպլանայնությունը և այլն:

Սոցիալիստական շինարարության ներկա ետադում
կադրերի պատրաստման գործում անպլանայնությունը
գլխավորելությունը, ուժերի վոչ ճիշտ դասավորումը
ճանդիսանում է մեծ խոչընդոտ սոցիալիստական շինա-
րարության գործում. «մեր յերկիրը մտել է դարգաց-
ման ախպիսի չրջան, յերբ բանվոր դասակարգը պետք
է ստեղծի իր սեփական արտադրական-տեխնիկական
ինտելիգենցիան՝ ընդունակ պաշտպանելու արտադրու-
թյան մեջ նրա շահերը, վորպես իշխող դասակարգի շա-
հեր» (Ստալին):

Մինչ այժմ գոյություն ունեցող մեթոդներից և
վոչ մեկը չի ապահովում վորակի բարձրացումը և ու-
սանողի մեջ չի ստեղծում ինքնուրույնություն, կոլեկ-
տիվ աշխատանք, ժամանակի բյուջեյի խելացի կադ-
մակերպում և այլն:

Պրոլետ-ուսանողության արհեստակցական կադմա-
կերպություններն ու մարմինները, մանրամասն քննու-
թյան յենթարկելով նոր մեթոդների ստեղծման ու կի-
րառման խնդիրները, թե ուսանողական ակադեմ. ակ-
տիվում, թե պրոֆեսոր-դասատուական վորոշ չրջաննե-
րում և թե արտադրական խորհրդակցություններում
առաջադրում են հրատարակվելիք որինակելի բրիգադ-
լարորատորիայի մեթոդի թեզիսները:

Ավելորդ չենք համարում ընդգծել, վոր միջանի
ինստիտուտների (գոտեխնիկական, անասնաբուժա-
կան, շինարարական) առաջադրվող մեթոդը՝ միջանի
կաֆեդրաների կողմից տվել է վիայլուն արդյունքներ,
բերենք յերկու քաղվածք:

Անասնաբուժական ինստիտուտի պրոֆկոմի
Բարտաղաբույքյան № 19 արձանագրությունից
10 հոկտեմբերի 1932 թ.

ԼՍՆՑԻՆ.—ՀԱՄԻՆԻ կադրերի սեկտորի կողմից առաջարկված լաբորատոր բրիգադային մեթոդի թեղերի քննումը:

ՎՈՐՈՇԵՑԻՆ.—Տալ հավանություն և դատել միանշանակ հնարավոր և մեր պայմաններում կիրառելի հիշված թեղիսները: Անհրաժեշտ համարել բաղմացնել թեղիսները և հանձնարարել պրոֆեսոր-դասախոսական Կադմին ծանոթանալու. դերեկցիայի հետ միասին հոկտեմբերի 20-ին 31 թ. հրավիրել պրոֆեսուրայի և ուսանողության ակադեմ. ակտիվի արտադրական խորհրդակցություն, քննության առնել թեղիսները և վերջնապես կիրառել կյանքում, արձանագրել, վոր լաբորատոր մեթոդի կիրառումը դիտելիակալան մատերիալից առարկայի գծով տվել և փայլուն արդյունքներ: Մինչ թեղիսների վերջնականապես քննարկումը դատել նպատակահարմար և հնարավոր մեկ-յերկու կաֆեդրաների գծով նույնպես անցնելու այս մեթոդներով պարասելուն: Խնդրել կուս. և ԼԿՅՆՄ բջիջների բյուրոներին իրենց գծով ևս քննարկել այս թեղիսները և ստեղծել հասարակական լայն կարծիք բրիգադ-լաբորատորիայի մեթոդների շուրջը՝ այդպիսին կիրառելու նպատակով:

Բերենք յերկրորդ որինակը.—

Անասնաբուժական ինստիտուտի արտոդրակալ խորհրդակցության վորոշումը բրիգադ-լաբորատոր մեթոդի առթիվ 1931 թ. հոկտեմբերի 29-ին

ՎՈՐՈՇԵՑԻՆ.—Այս մեթոդը զարգացնում և ուսա-

նողի ընդունակությունները, վերջ և տալիս դիմադրությունը և այլն Բայց քանի վոր ներկայումս նրա լիակատար կիրառման համար հիմն լայն հարմարություններ, խնդրել դերեկցիային պարզելու առանձին առանձին կաֆեդրաների դրությունը և անպայմանորեն անցկացնել այս մեթոդը միքանի կաֆեդրաներում այն հաշվով, վորպեսզի այդ փորձը հետադադարում ուղտագործվի բոլոր կաֆեդրաներում, բրիգադները կադմեիս ղեկավարվել կամավոր սկզբունքներով և միջոցներ ձեռք առնել, վորպեսզի թույլերը հետ չմնան ուժեղները:

Վերը բերված որինակները պարզ ապացուցում են, թե ինչպես այդ ինստիտուտների կադմակերպությունները ճիշտ հասկացել են և պայքարում են իրական ակտիվ մեթոդների կիրառման համար: Այդ մեթոդին ամբողջովին անցնելու համար միքանի ինստիտուտներում ու տեխնիկումներում այսօր կան վորոշ դժվարություններ՝ կապված շենքերի անհարմարությունների հետ, իսկ ղեկավարության սակավության հետ, բայց դա կարելի չե հաջող կերպով լուծել՝ ուղտագործելով բրիգադային պարասմունքների համար դերատեսչությունների շենքերը, մանավանդ վոր բրիգադների պարասմունքները կարելի չե անել հեռաշրջա, իսկ ղեկավարության խրոնրում, նորերը ձեռք բերուց դատ, անհրաժեշտ և զբաղված բաժանել բրիգադների մեջ, վոր ղեկավարության սուղ միջոցների ամենալավ ուղտագործման ձևն է: Այս յերկուսն ել յերբեք չեն կարող պատճառ հանդիսանալ ակտիվ մեթոդների չանցնելուն: Անհրաժեշտ և բայց չե վիճարկել լարել բոլոր ուժերը, մորիլիդացիայի յենթարկելով պրոֆեսիոնական ցանցը և վորջ խորհրդային հասարակայնությունը՝ հաջող կերպով լուծելու վորակալ տեխնիկական կադրերի պատրաստման դործը:

ԲՐԻԳԱԴ—ԼԱԲՈՐԱՏՈՐ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԲՈՒՀԵՐՈՒՄ ՅԵՎ ՏԵԼԵԿՈՒՄՆԵՐՈՒՄ

(Թեզիսներ)

1. Մեր արդյունաբերության զարգացման արագ տեմպերը և նրա տեխնիկական մակարդակի ել ավելի արագ բարձրացումը, աշխատանքի նոր ձևերը (սոցմբրցում, հարվածայնություն և այլն) բանիոր դատակարարից մասնագետներ պատրաստելու, «մեր սոցիալիտական շինարարության կենտրոնական պրոբլեմի» առաջ գնում են վսչ միայն քանակական տեսակի պահանջներ, այլև մանավանդ ու գլխավորապես վորակական տեսակի պահանջներ: Մասնագետից պահանջում են իր գործի խորը գիտություն, ստեղծագործական ձեռնբրեցություն հայտարերում, արդյունաբերական և տեխնիկական որավուր խոչորացող նվաճումներ ձեռք բերելու համար բանվորական մասսաների ենտուղիաղմը գլխավորելու կարողություն:

2. Այս պրոբլեմի հաջող լուծումը, մանավանդ պատրաստվող պրոլետարական մասնագետների վորակի նկատմամբ, կանխորոշվում է ուսումնական նյութի վերամշակման վորաջով, իսկ սա իր հերթին նշանակալից չափով կախված է դասավանդման մեթոդներից:

3. Մինչև այժմ կիրառվող լեկցիոն, պրոսեմինալրական, սեմինարական կոնվեյեր—ցրկլային և այլ մեթոդները չեյին համապատասխանում ուսանողի աշխատանքի ակտիվացմանը, չեյին զարգացնում նրա մեջ ինքնուրույն աշխատանքի և տեխնիկական դրականությունից ոգտվելու ունակություններ:

4. ա) Ուսանողի ժամանակի բյուջեյի մեծ մասը (70-80%) ծախսվում է խմբում դաստուլի հետ պարապելու ժամանակ, վորի հետևանքով ուսանողի ինքնուրույն

պարապմունքների ժամերը չափաղանց ստհմանալիվում են:

բ) Տարբեր ընդունակությունների տեր ուսանողներին միևնույն գրուպայում ընդգրկելը հնարավորություն չի տալիս առաջադիմող ուսանողներին ութեղացնելու իրենց սշխասանրի համար անհրաթեշտ տեմպերը, իսկ հետ մնացողներին հնարավորություն չի տալիս անհրաթեշտ նյութը յուրացնել հարկ յեղածիծ պես:

գ) Հաճախ ոացլիոնալ ձևով չի ոգտագործվում գաստտուն շնորհիվ այն հանգամանքի, վոր նա ստիպված է սեմինարիաներում մշակել ամբողջ նյութը՝ անկախ նյութի յուրացման հեշտությունից, իսկ նյութի մի մասի մշակումը տանը ինքնուրույնարար կատարելը դժվարացված է նրանով, վոր ուսանողը չունի այդ աշխատանքի համար անհրաթեշտ ժամանակը:

2. ՊԱՐԱՊՄՈՒՆԻՑՆԵՐԻ ԲՐԻԳԱԴ—ԼԱԲՈՐԱՏՈՐ
ՄԵԹՈԴԸ

Հիմնական դրույթ

1. Ամեն կերպ աշխատանքի վորակի բարձրացում, բրիգադների և սոցմբրցման ու հարվածայնության մեթոդների լավադույն կաղմակերպում: Ուսանողի ինքնուրույն աշխատանքի զարգացում: Պայքար հավասարեցման դեմ, վորն արտահայտվում է այն բանում, վոր խմբի բոլոր ուսանողների համար բոլոր առարկաների ուսուցման տեմպերը համահավասար չափով պարտադիր են դարձվում, առանց նկատի ունենալու ուսանողների անհատական ունակությունները:

Լրացուցիչ դրույթ

Ոթանդակություն ցույց տալ վորակաղեւ բարձր,

լով առաջադիմող բրիգադներին՝ սեմեստրից սեմեստր
բազմաթիվ փոխադրվելու գործում:

2. ՊԱՐԱՊՐՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

ա) Ներածական զրույց.

բ) Ինքնուրույն մշակում.

գ) Կոնսուլտացիա.

դ) Առաջադրությունների հանձնումը.

ե) Յեղրափակման զրույց—կոնֆերենցիա:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ՇՐՋԱՆԻ ԵՅՈՒ- ԹՅՈՒՆԸ

ա) Թեմայի մասին ներածական զրույցը նպատակ
ունի ամփոփ տեղեկություններ տալ տվյալ թեմայի
խնդիրների ելույթյան մասին, ինչպես նաև նպատակա-
յին զերբալորում, մեթոդական ցուցում և առաջադրու-
թյուն:

բ) Առաջադրությունն իր մեջ պարունակում է տը-
վյալ թեմայի նպատակային զրույթները, ուսանողի աշ-
խատանքի ծրագիրը, դրականության ցուցումը, մե-
թոդական ցուցումը, ստուգիչ հարցերը, խնդիրները
և վարժությունները: Առաջադրության կենտրոնը կաղ-
մում են մշակման ծրագիրն ու ստուգիչ հարցերը, վո-
րոնք ուղղություն են տալիս ուսանողի ամբողջ աշխա-
տանքին:

գ) Ինքնուրույն աշխատանքը կաղմված է յերկու
մասից՝ առաջադրության նյութի հիման վրա յուրա-
քանչյուր ուսանողի ինքնուրույն աշխատանքը և բրիգա-
դային աշխատանքը, վորի ժամանակ կոլեկտիվ կերպով
մշակվում են դժվարին խնդիրները, կատարվում է փո-
խադարձ ստուգում, սահմանվում են այն հարցերը,
վորոնց շուրջը հարկավոր է դասատվի կոնսուլտացիան:

Ինքնուրույն աշխատանքը ուղղամենտացիայի յե յե-
թարկվում դասացուցակով և նպատակ ունի մշակել
ուսման նյութը, լուծելու խնդիրները, հաշիվները կա-
տարելու, զծադրելու, լաբորատոր փորձերը կատարե-
լու միջոցներով և այլն:

4. Նյութը բրիգադներով մշակելու ժամանակամի-
ջոցում (ներածական զրույցի և յեղրափակման կոնֆե-
րենցիայի մեջ ընկած ժամանակամիջոցում) դասատուն
ըստ դասացուցակի կատարում և կոնսուլտացիա:

ա) Կոնսուլտացիան նպատակ ունի ոգնել բրիգա-
դին և առանձին ուսանողներին՝ պարզելու առաջա-
դրության համեմատաբար դժվար տեղերը, ուսանողի
հետագա աշխատանքին տալ ավելի ռացիոնալ և քիչ
ժամանակ խլող ուղղություն, ակտիվացնել կոնսուլ-
տացիան, վորն այդպիսով դառնում է առաջադիմու-
թյան հաշվառման հիմնակետ:

բ) Երբ բրիգադը վերջացնում է յուրաքանչյուր
առաջադրության մշակումը, դասատուն կոնսուլտացիա-
յի ժամերին ամեն մի առանձին ուսանողից անհատապես
ընդունում է առաջադրությունը. բրիգադը հաջորդ
առաջադրությանն անցնում է միայն նախորդ առաջա-
դրությունը հաշվառելուց հետո:

գ) Յեղրափակման զրույց—կոնֆերենցիան տեղի յե
ունենում միայն թեմայի կամ կուրսի վորոշ բաժնի
մշակումից հետո և նպատակ ունի՝ ամփոփել մշակված
նյութը, սահմանել մշակված թեմայի ամբողջական
հասկացողություն ուսումնասիրված հարցերի ընդհան-
րացման միջոցով, զարգացնել, լրացնել և սրբադրել
ինքնուրույն մշակման ժամանակ ստացված ուսումնա-
կան նյութը, հաղորդել թեմայի առանձին հարցերի
շուրջը լրացուցիչ տեղեկություններ, տվյալ թեմայի

կամ բաժնի բնագավառի շուրջը գիտական մտքի նվաճումների և զարգացման ընթացքի մասին տեղեկություններ և այլն:

4. ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՊԱՐԱՊՈՒՆՔՆԵՐԸ ԲՐԻԳԱԴ-ԼԱԲՈՐԱՏՈՐ ՄԵԹՈԴՈՎ ՏԱՆԵԼՈՒ

ԴԵՊՔՈՒՄ

1. Մի չարք ինստիտուտների վորձի հիման վրա նպատակահարմար դռնել.

ա) ներածական զրույցին հատկացնել դործող ուսումնական պլանով տվյալ առարկային հատկացված ժամողջ ժամանակի 20 տոկոսը.

բ) խմբակային կոնսուլտացիաներին—15 տոկոսը.

գ) ամեն մի առանձին բրիգադի կոնսուլտացիային 10 տոկոսը (խմբի նորմալ կազմի դեպքում—5 բրիգադ), բրիգադային կոնսուլտացիային ամբողջ խմբի համար հատկացվում և ամբողջ ուսպլանի ժամանակի 5, 10, 50 տոկոսը.

դ) յեղրափակման զրույցին—15 տոկոսը:

ե) առաջադրությունները պետք և կազմել 1-3 դեկադի համար այն հաշվով, վոր ուսանողը պարապի ուրական 9-10 ժամ.

զ) այն դիսցիպլինների համար, վորոնց ուսումնառությունը պահանջում և լարորատոր աշխատանքներ, աշխատանքային ժամանակը բաշխելու դեպքում դործող ուսումնական պլանով նախատեսված ժամերից պետք և հանել ժամերի այն քանակը, վոր հատկացված և լարորատոր աշխատանքներին:

5. ՀԱՇՎԱՌՈՒՄ ՅԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Հաշվառումն ու հսկողությունը կատարվում են ուսումնական աշխատանքների ժամանակ և պետք և հենվեն վոչ միայն քանակական ցուցանիշների վրա, այլ և զբաղվորապես վորակական ցուցանիշների վրա:

2. Ցուցանիշներ.

ա) հաճախումների հաշվառում.

բ) բանավոր ստուգում.

գ) զրավոր աշխատանքների ստուգում.

դ) ինչպես անհատական, նույնպես և բրիգադային լրանավոր և զրավոր ստուգումներ.

ե) ըլլոր լարորատոր առաջադրությունների լուծումը:

3. Հասարակական ցուցանիշներ.

ա) բրիգադում վոչ մի հետ մնացող.

բ) վոչ մի բրիգադ—վոչ—հարվածային.

գ) վոչ մի բրիգադ մյուսի հետ չմրցող.

դ) ծրագրի և վոչ մի հարց—առանց լրիվ յուրացման:

6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Ուսումնառվարչական հիմնական միավորը մնում և խումբը, ուսումնառման թողական հիմնական միավորը բրիգադն և, վորը կազմվում և 3-5 ուսանողներից:

2. Բրիգադը կազմվում և հետևյալ սկզբունքներով.

ա) հասարակական—քաղաքական հստակ ղեկավարություն կիրառում.

բ) հավասար տեմպեր առաջադրության, զարգացման և աշխատունակության միատեսակ աստիճանների համար.

դ) կամավորութեան սկզբունքը կազմակերպման շնորհում:

3. Բրիգադները դառնում են հասարակական-քաղաքական և արտադրական աշխատանքների կազմակերպիչ քննակար:

4. Լաբորատոր մեթոդի կիրառման պրակտիկան ցույց է տվել այն պնդումի անհիմն լինելը, վորն ասում է, թե չի կարելի բրիգադում թույլերին բաժանել ռաժեղներից:

ա) Համամատարաջ հետ մնացող ընկերները կարող են աշխատել լաբորատոր մեթոդով և համապատասխան կազմակերպման դեպքում ուժեղ բրիգադների կոնսուլտացիոն ժամերի կրճատման հաշվին (ուժեղ բրիգադների ոգնության, հասարակական բուքսիի և այլնի կազմակերպման դեպքում) հավասարվում են և առաջ են դնում խմբի հետ մասին: Դասատուն թույլ բրիգադներին պետք է հատկացնի ավելի շատ ժամանակ: Բրիգադի արտադրական աշխատանքի այսպիսի կազմակերպումը կվերացնի «խնամակալութունը», ուժեղների աշխատանքի արդեւակումը, ինքնուրույն աշխատանքը կարմատացնի և կտա վորակի բարձրացում:

7. ԼԱԲՈՐԱՏՈՐ ՄԵԹՈԴՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՆԱԽԱԴԻՅԱԼ-ՆԵՐԸ

1. Անհրաժեշտ է, վորպեսզի անցկացվի ուսումնական պլանի և ծրագրերի հետ խիստ կապակցված վոչ ավելի քան 4 դիսցիպլին:

2. Դասագրքերի բաշխում վոչ պակաս քան 1 դասադիրքը յուրաքանչյուր բրիգադին: Ուսումնական ձեռնարկների խիստ հանձնարարում աշխատել, վոր կաղմբվեն կոնսպեկտներ (վորպես միջոցում), վորոնք լրիվ

պետք է համապատասխանեն աշխատանքի լաբորատոր մեթոդին:

3. Վոչ ավելի քան յերկու կամ յերեք բրիգադի համար հարմարեցրած լսարանների առկայութիւն:

4. Լաբորատորական իրերի շնք:

5. Ուսումնական տարվա սկզբում յուրաքանչյուր խումբ, յուրաքանչյուր բրիգադ պետք է սենենա՝

ա) ուսումնական պլան:

բ) առարկաների ծրագրեր:

գ) առաջադրութիւններ:

դ) տնտեսական և գործնական ուսումնական ժամերի և հնարավոր դեպքում հասարակական աշխատանքների գրաֆիկ:

Առաջիկայում ևս պետք է պահպանել ուսումնական պարապմունքների կայուն դասացուցակային սիստեմը, ինչպես նաև ուսանողների և դասախոսների պարտադիր հաճախումը:

8. ՌԵԱԼ ՆԱԽԱԴԻՅՈՒՄԸ

1. Նախադրումը պետք է կատարվի արդյունաբերութիւնի և առաջադրութիւնների հիման վրա և անցկացվի գործարանում:

2. Այն դեպքում, յերբ այդ հնարավոր չի լինի կատարել գործարաններում—ինստիտուտներին կից կադմակերպել նախադժային բյուրո, վորի խնդիրը կլինի վնքել պայմանագրեր և առանձին աշխատանքները ռաշխել ամբիւնները և ուսանողական բրիգադների միջոցով:


Յ. ՍՈՑԻԱԼԻՍՏԻԱՆ ԳԵՂԱՅԻՆ ԶԱՐԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մրցող հիմնական միավորը պետք է լինի բրիգադը: Բրիգադի ներսում պիտի ապահովվի անհատական ժրգումը:

2. Սոցմրցման և հարվածայնության ծավալումը պետք է ապահովի բրիգադների բարձր վորակով ազատ առաջընթացումը:

3. Լայնորեն կիրառել ուսման վորակի վրա հասարակական հսկողության ձևերը — ակադեմ — մարտեր (բրիգադների, նույն տրիմեստրի խմբերի մեջ և այլն):

4. Պրոֆկոմի, պրոֆբյուրոյի, խմբերի և ապարատի աշխատանքի վորակը պետք է ստուգվի նրանով, թե վորքան ժամանակին են կատարվում բրիգադների վերցրած պարտավորությունները:



9126 10 400. (1/2 4.)

1
3377



**БРИГАДНО-ЛАБОРАТОРНЫЙ МЕТОД В
ВУЗАХ и ТЕХНИКУМАХ**

Госиздат ССР Армении
Эривань — 1932